ՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (XIX դ.)

ՎԱԼԵՐԻ ՂԼԵՋՅԱՆ

Օսմանյան կայսրության պատմության դեռևս անբավարար ուսումնասիրված պրոբլեմներից են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները և ընդհանրությունները՝ համեմատած առաջընթացի դասական ձևերի հետ։ Ճիշտ է, վերջին ժամանակներս լույս են տեսել սովետական արևելագետների մի շարք արժեքավոր աշխատություններ[1], որոնցում փաստորեն առաջին անգամ համակարգվեցին զարգացման ընդհանուր օրինաչափությունները, առաջ քաշվեցին կարևոր հարցադրումներ, կատարվեցին լուրջ ընդհանրացումներ, սակայն անելիքները դեռևս շատ են։ Դրանց թվում է Օսմանյան կայսրությունում Թանզիմաթի շրջանում առևտրական կապիտալի, առևտրական կապերի, ներքին և արտաքին առևտրի վիճակի և զարգացման ուսումնասիրումը։ Մեր նպատակն է՝ գլխավորապես հայ առևտրական կապիտալի օրինակով ցույց տալ կայսրությունում առևտրի զարգացման մի քանի բնորոշ առանձնահատկություններն ու նոր կողմերը անցյալ դարի կեսերին։

Առևտրի բնույթի, ձևերի և ընթացքի փոփոխությունները պայմանավորված էին ներքին և արտաքին մի շարք գործոններով։ Սոցիալ-տնտեսական զարգացման հետևանքով XVIII դ. վերջին և XIX դ. սկզբներին Բալկաններում, Փոքր Ասիայում և կայսրության այլ մասերում սկսեցին ձևավորվել կապիտալիստական հարաբերություններ։ Սոցիալ-տնտեսական վերափոխումներն օբյեկտիվորեն նպաստում էին ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը և կապիտալի կուտակմանը։ Բացի այդ տեղի էին ունենում մի շարք դրական քաղաքական տեղաշարժեր, որոնք բարերար ազդեցություն էին թողնում ներքին առևտրի և ապրանքաշրջանառության աճի վրա։ Նման տեղաշարժերից էին Փոքր Ասիայում քաղաքական կացության համեմատական կայունացումը, Թանզիմաթի ազդեցությունը տնտեսության մեջ ընդհանրապես, առևտրի մեջ մասնավորապես։ Ընդլայնվում էին առևտրի ոլորտները. ծովափնյա մասերից բացի՝ աստիճանաբար ներքին և համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ էին ներքաշվում տեղական շուկաները։ Առևտուրը, ըստ էության, սկսում էր ընդգրկել սոցիալական բոլոր խավերին, և, որ գլխավորն է, հեռանում էր տուր և առի նահապետական մեթոդներից։ Սակայն առևտրական կապիտալը գլխավորապես ֆեոդալական բնույթ ուներ և գործում էր քայքայվող, բայց տիրապետող ավատատիրական հարաբերությունների պայմաններում։ XIX դ. առաջին կեսերին Օսմանյան Թուրքիայում հայ առևտրական կապիտալը ներքին շուկայում միջնորդ դեր էր խաղում առանձին արտադրողների միջև, որի հետևանքով առևտրականը դառնում էր անմիջական արտադրողների՝ գյուղացիների և արհեստավորների շահագործող կողմ. դա ապահովում էր կապիտալի կուտակումը։ Ապրանքաշրջանառության ոչ բավարար զարգացումը, տեղական շուկաների միմյանցից կտրվածությունը, միևնույն ապրանքի գների բազմազանությունը, ինչպես նաև մի շարք այլ տնտեսական ու արտատնտեսական գործոններ «առևտրական միջնորդներին հնարավորություն էին տալիս ստանալ վիթխարի շահույթ»[2]։ Փոքր Ասիայում շրջանառու-

---

[1] О. Г. Инджикян, Буржуазия Османской империи, Ереван, 1977; И. Л. Фадеева, Османская империя и англо-турецкие отношения в середине XIX в., М., 1982; А. Д. Новичев, История Турции, т. 2—4, Л., 1968—1978 и др.

[2] «Экономическая энциклопедия», т. 4, М., 1980, с. 156.

թյան մեջ գտնվող առևտրական կապիտալը տվյալ ժամանակաշրջանում հենց այդպիսի դեր էր կատարում։ Աղբյուրների ժլատ տեղեկությունները հնարավորություն չեն տալիս ճշտությամբ որոշելու ներքին առևտրի մեջ ներդրվող կապիտալի չափերը, բայց որոշ տվյալների հիման վրա կարելի է այդ մասին պատկերացում կազմել։ Այսպես, 1827 թ. դեկտեմբերի 11-ին Կարապետ արքեպիսկոպոսին առևտրական Աղաջան Հայրապետյանի Բիթլիսից գրած նամակից երևում է[3], որ նա առևտուր էր անում եղբոր հետ ընկերացած և որ նրանց դրամագլուխը կազմում էր 150000 ղուռուշ։ Թոքատցի վաճառական Հովհաննես Կետիկյանի 1818 թ. կատարած մի առևտրական գործարքի արժեքը կազմում էր 10000 ղուռուշ[4]։ Կ. Պոլսում էրզրումցի վաճառական Պապո Դաբրիելյանը 1824 թ. միանգամից գնում է 4000 ղուռուշի ապրանք՝ գավառներում վաճառելու համար[5]։ Բոլոր գործառնությունները կատարվում էին առձեռն դրամով, և, ինչպես տրտնջում էր Ստեփանոս անունով մի վաճառական, մինչև ձեռքիդ «փարա» չտեսնեն, ապրանք չեն տա[6]։ Առևտրականները իրենց ձեռքում պահելու համար վաճառականները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում։ Դրա համար նրանք հաճախ գործարքի մեջ էին մտնում իշխող վերնախավի հետ, որի հետևանքով անմիջական արտադրողների շահագործումն ուժեղանում էր[7]։ Առևտրականը, իր ձեռքում ունենալով իշխանության թույլտվությունը, շահույթն ապահովելու համար ապրանքը գնում էր ցածր գներով[8], բայց վաճառում էր առավելագույն արժեքով։ Այդ պատճառով երկրի տարբեր շուկաներում գների մեծ անհամամասնություն էր առաջանում։ Բացի այդ, տարեցտարի այս կամ այն ապրանքի առևտրի թույլտվության համար վճարված գումարը մեծանում էր, որի հետևանքով աճում էին նաև շուկայական գները։ Այս երևույթը տարածված էր նաև պետական մենաշնորհ հանդիսացող հացահատիկի, բրդի և այլ ապրանքների առևտրում։ Վաճառականը, հաճախ, բացի առևտրից, զբաղվում էր սեղանավարությամբ և վաշխառությամբ։ 1827 թ. մի փաստաթղթից կարելի է տեղեկանալ, որ Կ. Պոլսում էրզրումցի վաճառականները զբաղվում էին նաև պարտամուրհակներ տալով, որը մեծ շահույթներ էր բերում[9]։ Իսկ սեղանավորը, գործարքի մեջ մտնելով տեղի իշխանության հետ, պարտքի դիմաց երբեմն վերցնում էր ապրանք, նշանակում կամայական գին և դիզում հսկայական հարստություն[10]։

Այսպիսով, Փոքր Ասիայի առևտրում գործող առևտրական կապիտալն ուներ ավատական բնույթ, որը բխում էր Օսմանյան Թուրքիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական կարգերից։ Այդ կարգի պահպանումը խանգարում էր առևտրի բնականոն զարգացմանը, սակայն, ինչպես Կ. Մարքսն է նշում, «Կապիտալի ոչ մի տեսակը չի կարող իր կոչումը, իր ֆունկցիան փոխել ավելի մեծ հեշտությամբ, քան այդ կարող է անել վաճառականական կապիտալը[11]։ Վերը նշված պատճառներով անցյալ դարի կեսերին հայ առևտրական բուրժուազիայի գործառնություններում նկատվում էին նոր կողմեր, որոնք բխում էին առևտրական կապիտալի բուրժուականացումից։ Ի՞նչ ասել է առևտուր, ինչպե՞ս պետք է առևտուր անել թեման դարձել էր անցյալ դարի կեսերի Օսմանյան և հատկապես հայկական մամուլի քննարկման առարկան։ Այն ժամանակվա հայկական մամուլի առանձին օրգաններ հրատարակվում էին առևտրա-

3 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163գ, վավ. 1044։

4 Նույն տեղում, կաթողիկոսական դիվան, թղթ. 32, վավ. 39։

5 Նույն տեղում, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163բ, վավ. 743։

6 Նույն տեղում, վավ. 703։

7 (М. Вронченко), Обозрение Малой Азии в ее нынешнем состоянии, составленное русским путешественником (այսուհետև՝ «Обозрение Малой Азии»), ч. I, СПб., 1839, с. 146.

8 Նույն տեղում, էջ 253։

9 Մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163գ, վավ. 988։

10 «Обозрение Малой Азии», ч. I, с. 264.

11 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3-րդ, մաս 1, Երևան, 1947, էջ 266։

կան բուրժուազիայի ներկայացուցիչների ջանքերով և նպատակ ունեին հնարավոր բոլոր միջոցներով նպաստել առևտրի զարգացմանը։ Զմյուռնիայում լույս տեսնող «Արշալույս արարատյան» թերթն առաջին իսկ համարի առաջնորդողում իր գլխավոր խնդիրն էր համարում ընթերցողներին ծանոթացնել առևտրական անցուդարձին[12]։ Ոմն Նիքոլա Փեծեր ևս իր հրատարակվելիք «Էնտիքաթեոր քոթիդեն» թերթի նպատակը նույնն էր համարում։ «Արշալույս արարատյանում» նա գրում էր, որ իր թերթը պետք է լույս տեսնի ամեն օր, ժամը 10-ին և ծանուցի, թե ցամաքով որտեղից ինչքան ապրանք է բերվել Իզմիր, ո՞վ է դրանց տերը, ո՞ւմ է հանձնվել։ Այն պետք է նաև տեղեկություններ պարունակի նավահանգիստ մտած նավերի բերած ապրանքների, փոխանակության, դրամի գների մասին և այլն[13]։ Չափազանցություն չի լինի ասել, որ XIX դ. 40—70-ական թվականներին Օսմանյան կայսրությունում լույս տեսած պարբերականների մեծագույն մասի բովանդակությունն այս կամ այն չափով առնչվում էր առևտրի հետ և ֆինանսավորվում էր առևտրական կապիտալի կողմից։ Մամուլը դառնում էր ոչ միայն առևտուրը պրոպագանդող, այլև դրա ընթացքն ու պայմանները քննող, մեկնաբանող, կանխատեսումներ կատարող, առևտրական կապիտալի իղձերն արտահայտող միջոց։

Օսմանյան կայսրությունում ապրանքաշրջանառության զարգացման այս նոր փուլում բնորոշ է դառնում նաև առևտրի նկատմամբ գիտական մոտեցումը, որը դրսևորվում էր հունական, հրեական, հայկական առևտրական դրամատերերի գործունեության մեջ։ Այս առումով հետաքրքիր է Ղ. Տերտերյանցի աշխատությունը[14]։ Առաջաբանում հեղինակը նշում է, որ բոլոր բնագավառներում, այդ թվում և վաճառականության մեջ, պետք է հասնել եվրոպացիներին։ Նա առևտրի զարգացման հիմնական պայմաններն էր համարում պետության գործարար, զորեղ միջոցառումները և վաճառականների «գիտությունն ու ուսումը»։ Ղ. Տերտերյանցի կարծիքով հարկավոր էր առևտրի մասին գրքեր գրել, հատուկ դպրոցներ բացել, եղած դպրոցների ծրագրերում առևտուրն ուսուցանող առարկաներ մտցնել[15]։ Լուսավորական գաղափարներով տոգորված այս մտքերն արտահայտում էին հայ առևտրական բուրժուազիայի այն ժամանակվա առաջադեմ մասի տրամադրությունները։ Ղ. Տերտերյանցի աշխատությունը մեծ արժեք ունի նաև այն պատճառով, որ նա աշխատել է առևտրի պրոցեսը հնարավորին չափ տեղայնացնել՝ վերլուծելով Օսմանյան կայսրության պայմանները, նշելով արևելյան առևտրի ստվերոտ կողմերը, գծելով դրա զարգացման ճշմարիտ ուղիները։ Այսպես, չխրախուսելով վերավաճառությունը, նա խստորեն պարսավում էր առևտրի մենաշնորհը, գիտակցելով, որ Թուրքիայում այն շատ է տարածված[16]։ Հեղինակի խորին համոզմամբ առևտրի առաջընթացի գլխավոր ուղին տեղական արդյունաբերության զարդացումն է[17]։

Առևտրի պատմությամբ հաճախ զբաղվում էին հենց առևտրականները։ Դրա բնորոշ օրինակը Հ. Հովակիմյանն է, որն իր գիտական գործունեության համար «հայ վաճառականներու Պապա նահապետը կկոչվեր»[18]։ Նա ֆրանսերենից թարգմանած գրքի առաջաբանում նշել է, որ խորապես ուսումնասիրել է առևտրական գործը և գտել, որ անհրաժեշտ է սոսկ մանրավաճառ «վաճառականության միջնորդ» լինելուց այն կողմ անցնել ու զարգացնել տեղա-

---

12 «Արշալույս արարատյան», 10. VIII. 1840։

13 Նույն տեղում, 8. V. 1842։

14 «Գիտություն վաճառականության, հորինեց Հ. Ղուկաս Տերտերյանց ի Մխիթ. ուխտենն», Վիեննա, 1848։

15 Նույն տեղում, էջ I—V։

16 Նույն տեղում, էջ 236։

17 Նույն տեղում, էջ 240—254։

18 Հ. Գ. Մ[ըրմըրյան], Թուրքահայոց հին վաճառականությունն ու վաճառականք, 1740—1890, Կ. Պոլիս, 1908, էջ 26։

կան առևտուրը Կ. Պոլսում և մյուս վայրերում[19]։ Այդ դաղափարի պրոպագանդումն էլ նա համարում է վերոհիշյալ գրքի թարգմանության շարժառիթը։

Առևտրի նկատմամբ լուրջ վերաբերմունքի մի վկայություն է նաև Ֆրանսիացի Սեյի «Քաղաքատնտեսություն» գրքի թուրքերեն թարգմանությունը։ Այդ գրքի թարգմանիչ Ս. Ապրոյանն այն փոքր-ինչ ընդարձակել է և օրինակները բերել Օսմանյան կայսրությունից, որի հետևանքով գիրքը Թուրքիայում դարձել էր գործածական[20]։

Առևտրի հետ կապված խնդիրների քննարկումը մամուլի ամենօրյա հոգսերից էր։ Շատ առևտրականներ, նշում էր Զմյուռնիայի հայկական թերթերից մեկը, հաշվեմատյան պահել չգիտեն, չեն տիրապետում կրկնատումար վաճառականության կանոններին, մինչդեռ չափահաս աշակերտը դա կարող է սովորել 3—4 ամսվա մեջ։ Թերթը հարց էր բարձրացնում դպրոցներում դասավանդել այդպիսի առարկա[21]։ Արդեն 1860-ական թվականներին քիչ չէին այնպիսի մեծահարուստ վաճառականները, որոնք հսկայական միջոցներ էին կտակում առևտրական դպրոցներ բացելու համար։ Այսպես, օրինակ, 1867 թ. մեծահարուստ առևտրական Բյուզանդ Քարակյոզյանի կտակի հաշմաձայն նրա միջոցներով (45000 լիրա) պետք է Կ. Պոլսում կառուցվեր առևտրական դպրոց, որի ընդհանուր տնօրինությունը պետք է իրագործեր 7—8 վաճառականներից բաղկացած խորհուրդը՝ Քարակյոզյան գերդաստանի անդամներից մեկի նախագահությամբ։ Այն պետք է հոգար նաև դպրոցի շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու հարցը[22]։ Այս մասին վկայում է նաև Կ. Պոլսի Ներսես պատրիարքը՝ 1875 թ. դեկտեմբերի 5-ին Կաթողիկոսին գրած նամակում[23]։ Կաթողիկոսի 1876 թ. ապրիլի 25-ի կոնդակից տեղեկանում ենք, որ սուլթանը թույլատրել է կառուցել այդ առևտրական դպրոցը[24]։ Հայտնի դրամատեր Օնիկ Տյուզյանը Կ. Պոլսի Միջագյուղի հայոց դպրոցին 2000 լիրա էր նվիրել, որպեսզի այդ միջոցներով աշակերտներն առևտրական գիտություն ուսումնասիրեն[25]։ Կ. Շահնազարյանը մի առիթով նշում էր, որ «վաճառականություն ըսելով առուծախք չեն ուզեր ըսել և ոչ 5 փարայով գնածն 6 փարայի վաճառելն...,—ասիկա խանութպանություն է»[26]։ Նա կոչ էր անում տիրապետել առևտրական գիտությանը և վերջինս ուսումնասիրել այնպես, ինչպես քերականությունը, մաթեմատիկան։

Այս ամենը վկայում են, որ հայկական առևտրական կապիտալի ներկայացուցիչները խորն էին ըմբռնում տնտեսական զարգացման նոր փուլում առևտրի դերն ու նշանակությունը։ Դրա լավագույն ապացույցը նաև Թանզիմաթի առաջին շրջանից սկսած լայն չափերով բուրժուական առևտրական ընկերությունների ձևավորման պրոցեսն էր, որը սկսեց տիրապետող դառնալ ներքին առևտրում, դարձավ շահույթով առևտուր անելու, գործարարության կարևոր օղակներից մեկը։

Առևտրի զարգացման պատմական անհրաժեշտությունը ստիպում էր այն ընդլայնել։ Մանրածախի առաջընթացին զուգընթաց, ավելի ու ավելի էր հզորանում մեծածախ առևտուրը, որը պահանջում էր խոշոր կապիտալ ներդրումներ։ Ընդ որում, Օսմանյան կայսրությունում դա այնքան էլ պարզ պրոցես չէր, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից։ Այն բարդանում էր կրոնական, ազգային, քաղաքական, արտաքին, ինչպես նաև բուրժուական հարաբերությունների առաջացման շրջանին հատուկ մի շարք սոցիալ-տնտե-

---

19 «Պատմություն նախնյաց վաճառականության և ճանապարհ հարստության», թարգմ. Հ. Հովակիմյան, Փարիզ, 1860, էջ 2։

20 «Նոյան աղավնի», 6. III. 1852։

21 «Հայրենասեր», 30. III. 1845։

22 «Արշալույս արարատյան», 14. VII. 1875։

23 Մատենադարան, կաթողիկոսական դիվ., թղթ. 227, վավ. 208։

24 Նույն տեղում, վավ. 214։

25 «Արշալույս արարատյան», 21. X. 1872։

26 «Երկրագունդ», 14. VI. 1864։

սական գործոններով։ Այդ պրոցեսի զարգացման մեջ առաջին հերթին աչքի էր ընկնում օսմանյան բուրժուազիայի ազգային խայտաբղետությունը։ Ազգային ինքնաճանաչման պրոցեսում սկսվում էին նոր ժամանակներ, որոնց դրսևորման ասպարեզներից մեկն էլ առևտուրն էր։ Եվ պատահական չէ, որ առևտրական ընկերությունները կազմավորվում էին նախ և առաջ ազգային հատկանիշներով։

Առևտրական ընկերությունների ստեղծումը 1840-ական թվականներից լայն չափեր էր ընդունել նաև հայերի մեջ։ Հայկական առևտրական ընկերությունները գործում էին գլխավորապես Փոքր Ասիայում և կապված էին ներքին շուկայի հետ։ Այդպիսի ընկերություններ էին ստեղծվել Կ. Պոլսում, Տրապիզոնում, Զմյուռնիայում, Նիկոմեդիայում, Կեսարիայում, Ադանայում, Ուշաքում և այլ քաղաքներում ու գյուղաքաղաքներում։ XIX դ. վերջին և XX դ. սկզբներին դրանց կառուցվածքը և կազմակերպչական ձևերը կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով բավականին բարդացել էին[27]։ 1843 թ. Կ. Պոլսում հիմնադրվում է «Արամյան ընկերությունը», որն ուներ 200 բաժին՝ 100000 ղուռուշ դրամագլխով։ Յուրաքանչյուր մասնակից հինգ բաժնից ավել չէր կարող գնել։ Ընկերությունը պետք է զբաղվեր գլխավորապես սուրճի, շաքարի, օճառի, մոմի, պանրի, խավիարի, կարագի և այլ առաջին անհրաժեշտության ապրանքների առևտրով։ Փայատերերը պետք է միայն հայ լինեին և առևտուր անեին սոսկ ընկերության միջոցով։ Ստացված շահույթի 100-ից 5-ը պետք է օգտագործվեր ազգօգուտ գործերի համար[28]։ «Առևտրական ընկերություն հայոց» անունով նման մի ընկերություն հիմնադրվում է Կ. Պոլսում՝ 1847 թ.[29]։

Հետաքրքիր է «Առևտրական ընկերություն սեպուհյան» միության ստեղծումն Աղաբաղարում[30]։ 1852 թ. մայիսի 1-ից վեց արհեստավոր և առևտրական երիտասարդներ առանց դրամագլխի ստեղծում են հիշյալ ընկերությունը։ Հիմնադրման օրից յուրաքանչյուր ընկեր օրական 40 փարա էր մուծում գանձարկղը։ Օրավուր հավաքած գումարը շրջանառության մեջ դնելով նրանք մեկ տարում ստանում են 10000 դահեկան շահույթ և որոշում ընդարձակել առևտրական գործառնությունները։ 1853 թ. առևտրական ընկերություն է ստեղծվում նաև Հալեպում։ Ընկերության կապիտալի մեծ մասը պատկանում էր Սարգիս և Հովհաննես Միսաքյաններին[31]։

Ներքին առևտրով զբաղվող հայկական մանր առևտրական ընկերությունները հետզհետե ամրապնդվում էին և մեծ չափերի հասցնում իրենց միջոցով կատարվող ապրանքադրամական շրջանառությունը։ Արդեն 1860-ական թվականներին այդպիսի ընկերություններ էին դարձել Հերմեսյան, Արամյան, Խնայողական, Ոսկերչական, Հայկազյան առևտրական բաժնետիրական միությունները։ Հերմեսյան ընկերությունը, օրինակ, ուներ 31 փայատեր և պատկառելի դրամագլուխ[32]։ Այս ընկերությունները ճյուղավորված էին Կ. Պոլսում և Փոքր Ասիայի այլ քաղաքներում։

Առևտրական ընկերություններ էին ստեղծում նաև հույները ու հրեաները։ Հայ առևտրական կապիտալի ջատագովները հաճախակի էին տրտնջում, որ հույները այդ գործում հայերից շատ են առաջ անցել և որ Եվրոպայում հայ վաճառականները երբեմնի փառքը չունեն[33]։ Եվ քանի որ դրա համար մեծ կապիտալ էր պետք, ապա ելքը փնտրում էին բաժնետիրական ընկերությունների ստեղծման մեջ[34]։ Արդեն XIX դ. կեսերին Կ. Պոլսի, Զմյուռնիայի և Կեսա-

---

27 Օ. Գ. Ինջիկյան. նշվ. աշխ., էջ 110—111։

28 «Արշալույս արարատյան», 15. V. 1842։

29 Նույն տեղում, 25. VII. 1847։

30 «Հայրենասեր», 15. VI. 1853։

31 «Արշալույս արարատյան», 3. VII. 1853։

32 Նույն տեղում, 24. XII. 1866։

33 Նույն տեղում, 25. VII. 1847, 13. X. 1850, 12. X. 1851։

34 Նույն տեղում, 13. X. 1850։

րիայի հայ վաճառականական կապիտալի ներկայացուցիչները, կազմելով տարբեր ձևերի առևտրական ընկերություններ, աստիճանաբար ներգրավվեցին եվրոպական մեծածախ առևտրի մեջ։ Դա ամենից առաջ վերաբերվում է Անգլիային, որտեղ հայկական գաղութի առաջացումը կապված էր համաշխարհային ապրանքաշրջանառության զարգացման հետ։ Անգլիայի հայկական գաղութն իր պատմությունը սկսում է հենց այդ ժամանակաշրջանից[35]։ Շուտով Անգլիայում առաջանում է մեծ կարողությունների տեր հայ վաճառականների մի հզոր խումբ, որի անդամների թիվը XIX դ. 60-ական թվականների սկզբին 30-ից անց էր[36], իսկ մեկ տասնամյակ անց հասավ 50-ի[37]։ Ի տարբերություն Օսմանյան կայսրությունում գործող ընկերությունների, այս առևտրական միությունները որպես կանոն ստեղծվում էին ազգակցական, արյունակցական համագործակցության հիման վրա։ Ինչ վերաբերվում է փայատիրական առևտրական մեծ ընկերություններին, ապա դրանց ստեղծման մի քանի փորձերն անհաջողությամբ վերջացան[38]։

XIX դ. 40-ական թվականներից սկսած Օսմանյան կայսրությունում ներքին ապրանքաշրջանառության զարգացման հետևանքով զուգահեռաբար սկսում է զարգանալ նաև տեղական առևտրական բուրժուազիան, որը 1860—70-ական թվականներին արդեն զգալի տեսակարար կշիռ ուներ[39]։ Ներքին շուկայի հետ կապված այս բուրժուազիայի զարգացումն անխուսափելիորեն պիտի հակասություն մեջ մտներ օտար կապիտալի հետ։ Տեղական առևտրական բուրժուազիան, զրկված լինելով անգամ պետական պաշտպանությունից, չէր կարող վճռական պայքարի մեջ մտնել օտար կապիտալի դեմ։ Ժամանակի հայկական մամուլում այս մասին կարելի է հանդիպել խուլ բողոքների և պայքարի սքողված կոչերի։ Այսպես, «Եվրոպա» թերթը գրում էր. «Յառաջացեք ձեր շահով, կկանչե Եվրոպա, ապա թե ոչ կառաջացնեմ իմ շահովս»[40]։ «Արաքածունյաց ընկերության» «Հայրենասեր» թերթն օտար առևտրականների դեմ պայքարելու ճիշտ ուղին համարում էր տեղացի առևտրականների համախմբումը, միմյանց վարկի պահպանումը, համակողմանի օգնությունը, հավատարմությունը, փոքր գործառնություն անող առևտրականների շահերը պաշտպանելը և այլն[41]։ Անգամ Մանչեսթրում լույս տեսնող «Երկրագունդը» զգուշացնում էր, որ չպետք է թույլ տալ, որ Օսմանյան կայսրությունում գործը հասնի այնպիսի աստիճանի, երբ օտարներն առևտրական գործառնություններին լրիվ տիրեն[42]։ Նույն խնդրին անդրադառնալով, Ա. Երիցյանը պարսավում է Անգլիայի աղատ առևտրի քաղաքականությունը, հենց դա էլ համարելով տեղական առևտրի զարգացմանը խանգարող հանգամանք[43]։ Հաճախ տեղացի, այդ թվում և հայ առևտրականները ճակատ էին կազմում՝ ապրանքների գները բարձր պահելու համար, բայց միշտ չէ, որ դա հաջողություն էր ունենում[44]։ 1858 թ. հոկտեմբերի 12-ին գրած նամակում Զմյուռնիայի օսմանյան վաճառականության ներկայացուցիչ Գ. Ապրոյանը մեծ վեզիրին շնորհակալություն էր հայտնում մի առիթով տեղական առևտրականներին պաշտպանելու համար։ Նամակի հեղինակը գտնում էր, որ Բ. Դուռը և տպթանը պարտավոր են օսմանյան վաճառականությանը պաշտպանել օտար

35 Մուշեղ Եպիսկոպոս, Մանչեսթրի հայ գաղութը, Պոստոն, 1911, էջ 12—13։

36 «Արշալույս արարատյան», 4. V. 1863։

37 Նույն տեղում, 22. VII. 1867։

38 Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 17։

39 Հայկ Ղազարյան. Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967, էջ 330։

40 «Եվրոպա», 11. IV. 1857։

41 «Հայրենասեր», 30. VI. 1843։

42 «Երկրագունդ», 14. VI. 1864։

43 «Վաճառական», 15. V. 1866։

44 «Արշալույս արարատյան», 29. VIII. 1841։

առևտրականներից, հոգ տանել նրա զարգացման համար[45]։ «Երկրագունդ» թերթում լույս տեսած «Օսմանյան կայսերական բանկ» հոդվածի հեղինակը (Մ. Թ. ստորագրությամբ) այս առումով կատարում է մի շատ հետաքրքիր դիտում։ Ըստ նրա, տեղական դրամատերերը օսմանյան կայսերական բանկի հետ, որտեղ տիրում էր օտար կապիտալը, ավելի շատ ստիպված են համագործակցում, քան թե կամավոր[46]։

Տեղական բուրժուազիայի դրամական, արդյունաբերական գործառնությունների ընդլայնման հակումը հատկապես ուժեղանում է Թանզիմաթի հենց սկզբից։ Իրավական խախուտ դրության որոշ կայունացումը և տնտեսության բոլոր ոլորտներում առաջադիմական օրենսդրության փորձերն առևտրականներին սկսում էին որոշակի հույսեր ներշնչել։ Հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչներից շատերը հենց այս շրջանում սկսեցին իրենց կապիտալը ներդնել արդյունաբերության մեջ, փորձեցին ստեղծել եվրոպական տիպի ֆաբրիկաներ։ Այդ հարցը դարձավ քննարկման առարկա, հրատարակվեցին բազմաթիվ հոդվածներ, աշխատություններ։ Հատկապես հետաքրքիր է Ե. Ջագճյանի աշխատությունը, որը երեք անգամ հրատարակվել է[47]։ Հեղինակը նշում էր, որ իր նպատակն ազգի «իրական շահի և օգտին» նպաստելն է։ Գրքի 37 գլուխներում մանրամասն նկարագրելով գինու, սոսնձի, օճառի, վառոդի, ապակու, հայելու և բազմաթիվ այլ ապրանքների արտադրության պրոցեսը, հեղինակն ընդգծում է, որ միայն գործարարությունը կբերի մեծամեծ շահույթ[48]։ Ըստ նրա, վաճառականությունը «գլխավորաբար արվեստով կկենա, որովհետև եթե արհեստավորը չպատրաստե, վաճառականն իր առուտուրին համար շատ քիչ նյութ կգտնե»[49]։

Գործնական մեծ նշանակություն ունեցան մետաքսագործության վերաբերյալ հրապարակումները։ Թանզիմաթյան օրենսդրության հեղինակներից մեկի՝ Ռեշիդ փաշայի մերձավոր օգնական և գիտնական Հակոբ Կոճիկյանը, մետաքսագործության զարգացման մասին հանդես է գալիս հոդվածաշարով[50]։ 1830-ական թվականներին Ռեշիդ փաշայի հետ Եվրոպայում լինելով դիվանագիտական աշխատանքի մեջ, նա հսկայական նյութ էր հավաքել այդտեղի մետաքսագործության մասին։ 1843 թ. նա Բուրսա է այցելում, որտեղ մետաքսագործության մասին հայերեն գիրք է գրում։ Եվ որովհետև այն ոչ բոլոր բուրսացիներին էր հասկանալի, նրա բարեկամներից մեկը՝ Ջեվդեթը, գիրքը թարգմանում է թուրքերեն[51]։ Հ. Կոճիկյանի գիրքը հայերեն լույս է տեսնում 1846 թ.[52]։ Պակաս կարևոր չէ այն փաստը, որ այդ գիրքը հրատարակվել է առևտրական և սեղանավոր Ճեզայիրլյան Մկրտիչ ամիրայի պատվերով ու ծախսով։ Գիրքը 1849 թ. ուղարկելով Ներսես Աշտարակեցուն, նա գրում է, որ այն հրատարակել է տվել «հայոց մետաքսագործոց լավ տեղեկություն տալու համար»[53]։ Ուստի պատահական չէ, որ հենց մետաքսագործությունը դարձավ օսմանյան և հատկապես հայ առևտրական կապիտալի գործառնության կարևոր բնագավառը։ XIX դ. 40-ական թվականների կեսերին այդ կապիտալով ստեղծվում են մի շարք մանարաններ, որոնց մեծ մասն աշխատում էր շոգու ուժով։ 1850 թ. Բուրսայում կար 4 մանարան (3-ը շոգեշարժիչով),

---

45 Նույն տեղում, 31. X. 1858։

46 «Երկրագունդ», 6. VII. 1864։

47 Ե փ ր ե մ Վ. Ջ ա գ ճ յ ա ն, Գործնական արվեստախոսություն կամ գլխավոր արվեստներու և անոնց դյուրին կերպով գործադրության առուշնորդ, Վիեննա, Մխիթ. տպարան, 1857. Նույնը՝ 1869 թ., նույնը՝ 1884 թ.։

48 Նույն տեղում, էջ 5։

49 Նույն տեղում, էջ 4։

50 «Արշալույս արարատյան», 12. VIII, 2. IX. 1844։

51 F. Dalsar. Türk sapayi xe Ticaret Tarihinde Bnrsada Ipekcilik, Istanbul 1960, s. 406.

52 Հ. Կ ո ճ ի կ յ ա ն, Մետաքսաբանություն կամ ազեկ մետաքս շինելու արհեստը, Կ. Պոլիս, 1846։

53 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 147, վավ. 449։

որոնք ունեին 230 ավազան։ Դրանցից 80-ը պատկանում էին հայերին[54]։ Տարեկան արտադրանքը կազմում էր 4.057.297 ղուռուշ։ Հետևաբար, այդ գումարի մեկ երրորդից ավելին հայ նորելուկ արդյունաբերողներինն էր։ Վերոհիշյալ Մ. Ճեղայիրլյանն այստեղ ուներ մի շոգեշարժիչով աշխատող մանարան, որը տարեկան արտադրում էր 6000 հոխա[55] գեղեցիկ մետաքս, օգտագործելով 80.000 հոխա հումք[56]։ Պիլեճիկի մոտ գտնվող մի գյուղում, որտեղ առատ ջուր կար, նա ջրի ուժով աշխատող մի այլ մանարան էլ է կառուցել տալիս[57]։ 1843 թ. Հ. Տյուղյանը և Պ. Պիլեզիկճյանը ստեղծում են մի մեծ մանարան, որի ճախարակները Բուրսայում և նրա շրջակայքում տեղադրված էին հետևյալ կերպ. Բուրսայում՝ 20, Պիլեճիկում՝ 16, Ենիշեհիրում՝ 16, Կեմլեքում՝ 16, Սուհալրճում՝ 16, Պանտրամայում՝ 16, ընդամենը 100 հատ։ Հ. Տյուղյանը Իտալիայից բերել է տալիս հատուկ վարպետ մանողների։ 1845 թ. Պիլեզիկճյան եղբայրները մի նոր մանարան են կառուցում, կից հատուկ շինությամբ, որտեղ պահվում և մշակվում էր հումքը։ Այն գտնվում էր Բուրսայի Սեթ պաշտ թաղում, ուներ 80 ճախարակ, 160 բանվոր և տարեկան արտադրում էր 4000 հոխա ընտիր մետաքս, օգտագործելով 50.000 հոխա հումք։ Այս մետաքսաթելն օգտագործվում էր Հերեքելի պետական կտորեղենի ֆաբրիկայում, ինչպես նաև արտահանվում էր Լիոն, Լոնդոն և այլ տեղեր[58]։ Բուրսայում 1851 թ. փետրվարից սկսեց արտադրանք տալ նաև Հ. Պայլյանի մանարանը, որի արտադրանքն ի ցույց դրվեց Լոնդոնի համաշխարհային ցուցահանդեսում և խրախուսվեց մամուլում։ Շոգեշարժիչը գործողության մեջ էր դնում 31 ճախարակ, որի օգնությամբ տարեկան արտադրվում էր 1800 հոխա մետաքսաթել, օգտագործելով 25.000 հոխա հումք[59]։

Հայ առևտրական բուրժուազիայի այսպիսի գործառնությունների մասին կարելի է բերել նաև այլ օրվալներ, որոնք ցույց են տալիս, որ շատ թե քիչ բարենպաստ պայմանների դեպքում հայ առևտրական կապիտալը վերածվում էր տնտեսության զարգացման հզոր խթանի։

УЧАСТИЕ АРМЯНСКОГО ТОРГОВОГО СОСЛОВИЯ В РАЗВИТИИ ТОРГОВЛИ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (XIX В.)

ВАЛЕРИЙ ГЛЕЧЯН

Резюме

В середине XIX в. в Османской империи наблюдалось интенсивное развитие торговли, способствующее формированию капиталистических отношений. Представители торговой буржуазии, в том числе и армянской, старались освоить европейские методы торговли и принять активное участие как во внутренней, так и во внешней торговле. В связи с этим в крупных торговых центрах Османской империи начали издаваться периодические издания, справочники и многочисленная литература по торговле и промышленности. Торговая буржуазия приобретала новые черты, образовались многочисленные торговые общества, делающие капиталовложения в разные отрасли экономики. Экономическое усиление местной буржуазии породило острые противоречия с иностранным капиталом.

---

54 «Եվրոպա», 22. VIII. 1850։

55 Մեկ հոխան հավասար է 1285 գրամի։

56 «Եվրոպա», 12. VIII. 1851։

57 «Հայրենասեր», 15. X. 1852։

58 «Եվրոպա», 4. XI. 1851։

59 Նույն տեղում, 13. IV. 1852։